

տաշէս: 6 Բայց էր նոցա միւս եւս եղբայր կրտեր, անուն Վարդ, որ էր մնացեալ տղայ ի դայեակս իւր ի Տայս:

ԿԳ. Չսոսա տեսանելով, որք ի ժամանակին իւրաքանչիւր ի տունս¹ որպէս գաղտագողի հարանաւք իբրեւ զանպիտանս գտանէին, ի Պարսկաց գտանուտերութիւնն գնեալ ուրացութեամբ ըստ անարժանութեանն, եւ ոչ տիրացեալք աստուածպաշտութեամբ իբրեւ զարժանաւորս, արք անմիտք եւ վնասակարք, անպիտանք եւ ոչ պիտանիք, վատք եւ ոչ քաջք. յորոց ոմանք² ի լեռնախոյզ անազակաց ի մէջ անցեալ ուրացութեամբ վերտէին, եւ ոմանք կատակութեամբ աստուածս դնէին, եւ զաստուածս եւ զանմիտ վաճառականսն ի միասին թշնամանէին. անմարդք ի ստոյգ մարդկանէ, եւ անարժանք եւ անծանաւթք յազգէ տոհմկաց: 2 Եւ էր այնուիտեւ տեսանել յաշխարհիս Հայոց զլաւութիւն հեռացեալ, զիմաստութիւն կորուսեալ, զքաջութիւն հեռացեալ եւ մեռեալ, զքրիստոնէութիւն թաքուցեալ. եւ որ երբեմն քաջանուն զաւրթն Հայոց ի մէջ այլ զաւրացն ամենայնի երեւէին, եւ զաւրագլուխք անուանիք եւ յաղթողք՝ ապա ծաղր էին ամենեցուն եւ կատակակնք. մինչեւ ինքն իսկ թագաւորն Պերոզ յայտնապէս նախատելով երբեմն առաջի ամենայն ատենին ասէր, թէ «Այր անպիտան եւ գունդ յետին, որ զամ մի յիմ իշխանութիւնն Է³՝ Ասորոց Է. բայց քան զԱսորի՝ Հայն Է այր⁴ յետին եւ անպիտան»: 3 Եւ էր լուրն այն արժանի լալոյ եւ ողբալոյ:

4 Եւ այնպիսի անպիտան իշխանք ժամանակին իբրեւ տեսանէին ար ըստ արեւ զաճումն յառաջադիմութեան յորդիս ազգի նահատակելոց Մամիկոնէից, զոր ոչ ի տուչութենէ մարդոյ վստահեալ ունէին յանձինս, այլ անուրթեամբ վերին ինսամակալութեան, ի բարեխաւսութենէ սուրբ արեան նախնեացն իւրեանց, զոր ի վերայ սուրբ եկեղեցւոյս Հայոց հեղին յաւժարութեամբ, կային աներկիւղապէս ի մէջ անուանեալ իշխանացն Հայոց, որպէս ի մէջ թշնամեաց: 5 Թեպէտ եւ արհամարհեալք էին առ նախանձու, սակայն լաւագոյնք էին եւ երեւէին յամենայնի, եւ ականաւորք ի խորհրդի, մտաւորք եւ իմաստնագիւտք. ի նետաձգութեանն զեղեցկածիգք եւ դիպեցուցողք⁵, յորս՝ թեթեւաշարժք եւ նախասպանք, յերկոցունց ձեռաց աջողակք, եւ յամենայն կողմանս ուղղակիք եւ շնորհալիցք. զորոց ձանձրացուցանէին բազմածառայքն զանծառայիցն զդուրսն, ինդրելով հանապազ զմիս այլ եւ այլ որսոց, եւ կամ այլ պատուական եւ մեծագին գիւտից ինդրովք ըստ իւրաքանչիւր աշխարհաց: 6 Նոքաւք շքեղանային ընթրիք ամենայն տանուտերանց

1 2. իւրաքանչիւր ի տանց

2 SS. որոց ոմանք

3 2. զամ մի իմ իշխանութիւնն Է

4 2. նախ՝ հայ այր, յետոյ՝ վերելից լրացրած այսպէս

5 2. նախ՝ դիպողք, յետոյ՝ վերելից լրացրած այսպէս